ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ Մ. Թ. Ա. III – I ԴԴ.

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

Քաղաքակրթության նոր՝ հելլենիստական փուլ թևակոխած տարածաշրջանի գերիզոր ուժերի (Սելևկյաններ, Պարթևներ, Հռոմ) ռազմաքաղաքական բարդ փոխհարաբերությունների անկայուն մթնոլորտը Հայաստանին պարտադրում էր աննահանջ պայքար մղել հանուն պետականության ամրապնդման:

Պետական հզոր համակարգի կայացման գործընթացում առաջնահերթ անհրաժեշտություն է տնտեսական համակարգի ճշգրիտ, լիարժեք կազմակերպումը: Տվյալ ժամանակաշրջանում երկրի տնտեսության առաջընթացն ապահովող հիմնարար ուղղությունը գյուղատնտեսության զարգացումն էր:

Ցարդ գիտական շրջանառության մեջ առկա հնագիտական սուղ նյութերի և գրավոր աղբյուրների ընձեռած տվյալների համեմատական վերլուծությամբ փորձենք վերականգնել Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ընդհանրական պատկերը՝ Երվանդունիների երկրորդ թագավորության և Արտաշիսյան արքայատոհմի գործունեության ժամանակահատվածում (մ. թ. ա. III– I դդ.)[1]:

Նախորդ՝ մ. թ. ա. VI– IV դդ. ժառանգված հողի մշակման, բերքահավաքի, մթերքի վերամշակման աշխատանքային գործիքների հայտնի հավաքածուն[2] համալրվում է քննվող ժամանակաշրջանի հուշաձանների պեղումներով հայտնաբերված հնագիտական համարժեք նյութերով (կացնաձև ցաքատ, բահ, պոչուկավոր ու կոթառավոր մանգաղներ, խոշոր կորաշեղբ դանակներ, ակիշներ), ինչպես նաև ունկավոր սանդերով, լծակավոր «հրվող» աղորիքներով, տարապաններով:

Ըստ հնէաբուսաբանական տվյալների՝ Հայկական լեռնաշխարհում ավանդաբար մշակվող հացազգիների, ոլոռազգիների տեսականին նեոլիթ-էնեոլիթից ի վեր շարունակաբար հարստացել է (ցորեն, գարի, կորեկ, վարսակ, տարեկան, հաճար, ոսպ, նուտ, սիսեռ)[3]: Երկրում արտադրվող հացամթերքի

---

[1] *Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ընթացքը նախորդ՝ Երվանդունյաց առաջին թագավորության և Աքեմենյան սատրապության ժամանակաշրջանում տե՛ս Գ. Քոչարյան. Հայաստանի գյուղատնտեսությունը մ. թ. ա. VI–IVդդ.– ՊԲՀ, 2010, -2, էջ 169 -171:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 172:*

[3] *Հնէաբուսաբանական տվյալների մասին տե՛ս* Г. Н. Лисицына, Л. В. Прищепенко. Палеоэтноботанические находки Кавказа и Ближнего Востока. М., 1977, с. 62–69, 71–73, 91–95; *Ռ. Հովսեփյան. Առատաշենի նեոլիթյան բնակատեղի հնաբուսաբանական նյութերը.– Հին Հայաստանի մշակույթ, XIII, Երևան, 2005, էջ 51-53, Ժ. Խաչատրյան. Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո.– ՊԲՀ, 2007, -2, էջ 20:*

մեծաքանակ ծավալների առկայությունը փաստված է հնագիտական տվյալներով (մեկ կամ մի քանի հաղորդակից հորեր, քարաշար, 2-5 տոննա տարողությամբ ամբարներ, թոնիրներ, սաճեր, ակիշներ և այլն)[4] և Տիգրան Մեծի զորքի համար ամբարված «հացի պաշարների» մասին Պլուտարքոսի վկայությամբ[5]:

Հայկական լեռնաշխարհի անտառներում մրգատու ծառատեսակների զանգվածային առկայությամբ պայմանավորված՝ վաղ բրոնզեդարից զարգացող այգեպտղաբուծության համալրվող հարուստ տեսականու (ծիրան, սալոր, խնձոր, դեղձ, ալոճ, բալ, կեռաս, հոն, նուռ, տանձ, սերկևիլ)[6] բազմազանությունն էր, թերևս, որ դրդեց Ստրաբոնին մեր հովիտները «արտակարգ պտղավետ»[7] բնութագրել:

Հնագիտական և հնէաբուսաբանական հետազոտությունների տվյալներով հաստատված՝ մ. թ. ա. V–IV հազ. ի վեր Հայկական լեռնաշխարհում խաղողագինեգործության մշակույթի զարգացման ավանդույթները[8] ավելի ուշ փաստագրված են նաև գրավոր վկայություններով: Ստրաբոնի հաղորդումը[9], որ Կուր-արաքսյան միջագետքի (Շակաշենե, Արաքսենե) հովիտներում խաղողի որթատունկից ստանում էին 1 մետրետ (=39,5 լ) գինի, վստահաբար կարելի է վերագրել Հայաստանի հովտային ու նախալեռնային գոտուն ընդհանրապես[10]: Խաղողի մեծաքանակ բերքի վերամշակման անհրաժեշտությամբ էր պայմանավորված բնակելի տների տնտեսական հարկաբաժնի հնձաններից զատ, այգեմիջյան կամ հումքի մերձակայքում գինու արտադրության կառույցների առկայությունը[11]: Քննվող

---

[4] *Ցորենի, գարու, վարսակի, սիսեռի մնացորդներով ամբարների, հաց թխելու սաճերի մասին տե՛ս Հ. Խաչատրյան. Ուրվագծեր Շիրակի դաստակերտի մ. թ. ա. 1-ին դարի առևտրատնտեսական հարաբերությունների.– Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական առաջին գիտաժողով. Զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 28-30, նույնի՝ Անտիկ շրջանի խոհանոցային խեցեղենի գործառական որոշ խնդիրների շուրջ.– Գիտական աշխատություններ, V, Գյումրի, 2002, էջ 107-108:*

[5] Плутарх. Избранные жизнеописания (*այսուհետև՝* Плутарх). Сост. и примеч. М. Томашевской. М., 1987, Лукулл, XXXI.

[6] Г. Н. Лисицына, Л. В. Прищепенко. *Նշվ. աշխ., էջ* 63, 68, 71–73, A. Bobokhyan. Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500–1500 v. Chr. Bd. 2. Oxford, 2008, S. 81–84, 313 und etc.

[7] Страбон. География в 17 книгах (*ЗЫлбхС»п¨՝* Страбон). Пер., статья и комм. Г. А. Стратановского. Л., 1964, XI, XIV, 4.

[8] *Մանրամասն տե՛ս Գ. Ս. Թումանյան. Հնձանային մշակույթը Հայաստանում, Երևան, 2008, էջ 8-38 և այլն:*

[9] Страбон, II, I, 14; XI, VII, 2.

[10] *Տե՛ս նույն տեղում, XV, I, 58.*

[11] *Հմմտ. Արմավիրի ագարակատան հնձանը, Գետառի հովտում՝ Ավան-Առինջի խաղող ճզմելու առագաստի կրասվաղի բեկորները, քաղցուի գուռը, Աշտարակի «Խոջաբաղերի» և «Մուղնու թառի» այգեմիջյան հնձանները, Քասաղի աջափնյա կիրճահայաց մասում՝ Աղթամիրի «ժայռափոր, կավածեփ ավազանները, գինու հորերը», Ամբերդ գետի առափնյա բարձունքին՝ Ագարակի ժայռակերտ հնձանների համալիրը և այլն (տե՛ս Գ. Ս. Տիրացյան, Բ. Ս. Կարապետյան. Արմավիրի 1977-1978 թթ. պեղումները.– ՊԲՀ, 1979, -4, էջ 251-255, նկ. 1-3,* А. Демирханян. Северо-восток Еревана в эпоху Арташесидов. Ереван, 2010, с. 56; *Գ. Ս. Թումանյան. նշվ. աշխ., էջ 29, 31-33, Հ. Սիմոնյան, Հ. Գաշ, Ս. Ժամկոչյան և ուրիշներ. Հայ-բելգիական համատեղ պեղումներ Ոսկեվազում.– Հայաստանի Հանրապետությունում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ. Երևան, 1996, էջ 68):*

ժամանակի բնակավայրերում հայտնաբերված՝ բոլորշի ակոսառվակով ու ծորանով սալաքար-տարապանները հաստատում են հումքի վերամշակման գործընթացի կատարելագործումը[12] գինեգործության մշակույթի զարգացման մ. թ. ա. II–I դդ. շրջափուլում:

Այս ժամանակահատվածի խեցեղեն արտադրանքում գինու պահեստավորման և տեղափոխման համար նախատեսված ավանդական տարայի՝ կարասների, կողքին նորաձև տափաշշերի քանակական ակնառու գերակշռությունը՝ գինեգործական արտադրանքի ծավալների զգալի աճի ցուցանիշ է: Հայտնաբերված տափաշշերի նշանակալի քանակը, բարձր որակը, ձևի կայունությունը, գունազարդման ընդհանրությունը, տարողությունների նույնաչափությունը՝ բարձրորակ գինու մեծածավալ արտադրանքը ապրանքափոխադրական հատուկ տարայով շրջանառության մեջ դնելու ավանդույթի զարգացման ապացույց են[13]: Միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիների խաչմերուկում հելլենիստական դարաշրջանի Հայաստանի մասնակցությունը գինու առքուվաճառքին վավերացված է բազմաթիվ կնքադրոշմներով, ինչպես նաև ամֆորաների, մետաղադրամների առկայությամբ[14]:

Ըստ հնէաբուսաբանական ուսումնասիրությունների տվյալների՝ Հայկական լեռնաշխարհը վաղ էնեոլիթից ի վեր հայտնի էր ձիթատու բուսատեսակներով[15]: Մ. թ. ա. III–II հազ. աքքադական սեպագիր աղբյուրների վկայությամբ՝ այստեղից արտահանվել են կտավատ, պիստակենի, ձիթապտուղ, հավանաբար, և ձիթահումք՝ անուշահոտությունների պատրաստման համար[16]: Քննվող ժամանակաշրջանի հատուկ ապրանքափոխադրական տարայով կտավատի, ինչպես նաև դառը նշի բարձրորակ յուղի արտահանման պատմահնագիտական տվյալները[17] ձիթամթերքի հավելյալ

---

[12] *Քաղցուն առավելագույնս մզելու համար՝ առագաստում ոտքերով արդեն տրորված խաղողի զանգվածը ճզմվել է տարապանի վրա: Տարապաններ (երբեմն նաև բնորոշ շարժական ավազան-քարե գուռերով) հայտնաբերվել են Արմավիրում, Դվինում, Արտաշատում, Զվարթնոցում, ներկայիս՝ Նորագավթում, Այգեշատում, Եղեգնաձորում, Նախիջևանում և այլուր (Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 29-30, 33-34):*

[13] *Ավանդույթ, որի վաղեմությունը փաստագրված է դեռևս Մարիի թագավորության մ. թ. ա. XVIII դ. սեպագիր տեքստերում: Հայկական լեռնաշխարհի վերինեփրատյան շրջաններից □հատուկ անոթներով□ դեռևս մ. թ. ա. II հազ. գինի է առաքվել Միջագետք (տե՛ս* A. B o b o k h y a n. *Նշվ. աշխ., էջ 83-84 և այլն):*

[14] Ж. Х а ч а т р я н, О. Н е в е р о в. Архивы столицы древней Армении Арташата. Ереван, 2008, с. 43, 85–89:

[15] Г. Н. Л и с и ц ы н а, Л. В. П р и щ е п е н к о. *Նշվ. աշխ., էջ 68, 72-73, 91-95, Գ. Գ. Ք ո չ ա ր յ ա ն. Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, -2, էջ 103, Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 20:*

[16] *Տե՛ս* A. B o b o k h y a n. *Նշվ. աշխ., էջ 81-84 և այլն:*

[17] *Բենիամինում՝ Արտաշիսյանների արքայապատկան դաստակերտում հայտնաբերված տափաշիշը (զմռսված հում կավի զանգվածով՝ վրան քուղի հետքեր և արտադրողի կամ մաքսային երկու տարբեր կնքադրոշմ), հավանաբար, օգտագործվել է կտավատի յուղի տեղափոխման համար: Ազգագրական նյութերից դատելով՝ այն մշտապես բավարարել է բնակչության «տնտեսական, կենցաղային ու հոգևոր պահանջները», փոխանակվել հովտային շրջանների բնամթերքով կամ արտահանվել երկրից դուրս (տե՛ս Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Ուրվագծեր Շիրակի դաստակերտի մ. թ. ա. 1-ին դարի առևտրատնտեսական հարաբերությունների, էջ 29-30, Ս. Հ ո բ ո ս յ ա ն. Ձիթագործությունը Շիրակում.– Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական երրորդ գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ. Գյումրի, 1998, էջ 40-41): Դառը նշի յուղի մասին տե՛ս Ռ. Փ ա լ ա ն ջ յ ա ն. Հին*

արտադրանքի ապրանքային բնույթի վկայություններն են: Քնջութի, կանեփի, ձիթապտղի, ընկույզի, նշի մշակությունը վկայող հնէաբուսաբանական տվյալները, հնագիտական նյութերում՝ սրանց վերամշակման միջոցները[18], կանեփաթել ամրացանցով խեցանոթների[19] ու բազմաթիվ ճրագների առկայությունը հավաստում են՝ հելլենիստական դարաշրջանի Հայաստանում սնունդ, թելանյութ, ճրագալույս ապահովող ձիթագործության ավանդական մշակույթի զարգացումը[20]:

Հնէակենդանաբանական նյութի ուսումնասիրությամբ հաստատված ընտանի կենդանիների ավանդաբար պահպանված կազմը (ցուլ/կով, ոչխար, այծ, խոզ, ձի, կուլան, շուն) և կաթի, մսի, բրդի, կաշվի մշակման միջոցների հնագիտական նյութերը (կովկիթներ, ձձումներ, դանակներ, խուզի մկրատներ, թեշիկի գլխիկներ, մանածագործի դազգահի կախիկներ, մախաթներ և այլն) համալրվել են բարեկարգ գոմերով (քարածածկ հատակ՝ գոմաղբի եզրային, գոգավոր «առվակ», մեկական կամ զույգ հանդիպակաց մսուրքներ)[21] և մեծաքանակ անասնակերի պահեստավորման կցակառույցներով: Ձիու, կուլանի ոսկրաբանական մնացորդները, ավանակի պատկերը մաքսային կնքադրոշմների վրա[22], ինչպես նաև հազար ձի լծասարքով ու հազար ջորի Անտիոքոս III Սելևկյանին՝ Ծոփքի Քսերքսես թագավորի տված հարկի մասին Պոլիբիոսի հաղորդումը[23] հավաստում են մեր տարածաշրջանում (մ. թ. ա. III–II հազ. ի վեր փաստագրված) բեռնակիր և հեծկան ավանդական կազմի[24] տևական առկայությունը:

Տիգրան Մեծի զորքի գլխավոր հարվածային ուժը՝ ծանրազեն զրահապատ հեծելազորը, Պլուտարքոսի վկայությամբ՝ «իր ահարկու տեսքով և հսկայական քանակությամբ» զարհուրեցնում էր թշնամուն[25]: Լայնածավալ

Հայաստանը օծանելիքի միջազգային առևտրի ոլորտում.– Հին Հայաստանի մշակույթը, XII, Երևան, 2002, էջ 72:

[18] *Սանդերը, հավանգները, աղորիքները, տարապաններն ու քարե տաշտերը լայնորեն կիրառվել են նաև ձիթատու որոշ բուսատեսակների վերամշակման համար:*

[19] *Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Անտիկ շրջանի խոհանոցային խեցեղենի գործառական որոշ խնդիրների շուրջ, էջ 107-108:*

[20] *Հմմտ. քաթանե կտավի դաջվածքի հետքերը մ. թ. ա. III հազ. խեցեղենի վրա, քնջութի վերամշակումը վանտոսպյան ձիթհաններում, «քնջութի և դառը նշի և բևեկնի յուղի» և □սրանցից պատրաստված մեռոնի□ գործածությունը մ. թ. ա. V–IV դդ. և այլն (Գ. Ե. Ա ր ե շ յ ա ն. Նոր նյութեր Հայաստանի մ. թ. ա. 3-րդ հազարամյակի երկրագործական տեխնիկական կուլտուրաների մասին.– Հայկական ՍՍՀ-ում 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, 1979, էջ 13, Զ. Ղ ա ս ա բ յ ա ն. Ձիթագործությունը Ուրարտուում.– ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1957, -4, էջ 107-116, Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, IV, IV, 13):*

[21] Н. М а н а с е р я н, Л. М и р з о я н. Коллекции субфоссильных млекопитающих.– *Հին Հայաստանի մշակույթը, XIII, Երևան, 2005, էջ 202-203, Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Ուրվագծեր Շիրակի դաստակերտի մ. թ. ա. 1-ին դարի առևտրատնտեսական հարաբերությունների, էջ 29:*

[22] Ж. Х а ч а т р я н, О. Н е в е р о в. *Նշվ. աշխ., էջ 94-95:*

[23] *Պ ո լ ի բ ի ո ս. Պատմություն, Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ.– Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, VIII, 25:*

[24] *Ս. Կ. Մ ե ժ լ ո ւ մ յ ա ն. Լոռի-բերդի դամբարանադաշտի հնէակենդանաբանական նյութը (1989–1990 թթ.).– Հայաստանի Հանրապետությունում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ. Երևան, 1991, էջ 46:*

[25] П л у т а р х. Лукулл, XXXI.

երկրի անառիկությունն ապահովող բանակի ծանրագեն հեծելազորին անհրաժեշտ՝ մարմնեղ, պնդակազմ, ուժեղ, տոկուն, իսկ թեթևագենին՝ առույգ, դյուրաշարժ, սրընթաց հեծկանների բազմազանություն ու քանակ էր ապահովում ցեղային ձիաբուծությունը:

Այսպիսով՝ քննվող ժամանակաշրջանի երկրագործության և անասնապահության ավանդական ճյուղերի շարունակական զարգացման վերակազմված ընդհանրական համայնապատկերում ակնհայտ է գյուղատնտեսական արտադրանքի ծավալների և շրջանառության նշանակալի աճի միտում:

Տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրության անբարենպաստ պայմաններում Երվանդունիների երկրորդ թագավորությունը մ. թ. ա. III դ. 70-ական թվականներից սկսած՝ հզորացող հարևաններին տարածքներ զիջեց և անկարող եղավ պահպանել երկրի լիակատար անկախությունը:

Մեծ Հայքի գրեթե ողջ տարածքն ընդգրկող վերամիավորված երկրի քաղաքական անկախությունն ամրապնդելու, պետական ռազմատնտեսական հզոր համակարգ հիմնելու նպատակով՝ Երվանդ Վերջինին հաջորդած Արտաշես Առաջինը (մ. թ. ա. 189–160 թթ.) ձեռնամուխ եղավ տնտեսական բնույթի ծրագրային լայնածավալ բարեկարգումների իրագործմանը[26]:

Կենտրոնական իշխանության նախաձեռնությամբ՝ ոռոգելի բարեբեր հովիտներում, մայրուղիների և սրանց ճյուղավորումների երկայնքին, քաղաքների ու տարաբնույթ բնակավայրերի խտացման գործընթացն[27] ընդգրկում էր նաև գյուղատնտեսության զարգացումն ապահովող ոռոգման գործող համակարգի աննախադեպ ընդարձակում[28]:

Գյուղատնտեսական ոռոգելի լայնածավալ հողատարածքներով են օղակվում քաղաքներն ու քաղաքատիպ ավանները, ձևավորվում է քաղաքամերձ տնտեսական գոտի՝ խորա[29]: Վաղ միջնադարյան գրավոր աղբյուրներում հիշատակված, հելլենիստական ժամանակաշրջանի վաղեմություն ունեցող բնութագրումները[30] վկայում են քա-

---

[26] *Տե՛ս Գ. Քոչարյան. Արտաշես Ա Բարին որպես հզոր պետականություն կերտող (կերպարային դիմանկարի վերականգնման փորձ).– Գիտական աշխատություններ, III, Գյումրի, 2000, էջ 22-27:*

[27] *Մեծ Հայքի Միջնաշխարհում Արտաշես Ա-ը կառուցեց մայրաքաղաք Արտաշատը, երեք Զարեհավան, երկու Զարիշատ, Արքսատա, Արտամատ քաղաքները, վերակառուցվեցին և բնակեցվեցին հնագույն բնակատեղիներ, առաջացան քաղաքատիպ ավաններ, դաստակերտներ, տաճարական միավորումներ և այլն (տե՛ս նույն տեղում):*

[28] *Վանտոսպյան ժամանակներից ի վեր պարբերաբար նորոգվող ու համալրվող ջրանցքների համատարած ցանցերը՝ Արարատյան դաշտում, Վանի ավազանում, Մշո-Մանազկերտի-Բասենի, Երգնկայի դաշտերում և այլուր տե՛ս Գ. Քոչարյան. Հայաստանի գյուղատնտեսությունը մ. թ. ա. VI–IVդդ., էջ 169-171:*

[29] *Հնագիտական հետազոտություններով փաստված՝ Արմավիրը, Արտաշատը, Վարդգեսավանը սպասարկող մերձքաղաքային գոտիների մասին տե՛ս* Г. А. Тирацян. Культура древней Армении. Ереван, 1988, с. 80–82; *Գ. Գ. Քոչարյան. Ոստան Հայոց գավառը Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածք.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, -2, էջ 172-175, Ժ. Խաչատրյան. նշվ. աշխ., էջ 20, Գ. Քոչարյան. Մոխրաբլուր հնավայրը (անտիկ շերտի բնութագիրն ըստ 1975, 1977 թթ. պեղումների արդյունքների).– Հուշարձան, տարեգիրք Դ – Ե, Երևան, 2008, էջ 160-168:*

[30] *«…զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք», «…զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեւղս և զավանս, որ շուրջ զնովաւ էին» (Եղիշէ. Վասն Վարդանայ եւ*

ղաք + խորա *գույգի վարչատնտեսական մեկ ամբողջություն լինելը: Արքայի վարած ներքին քաղաքականությամբ, ազատ համայնականների մշակած մեծաքանակ բնամթերքի կուտակումով, խորան վերածվում էր քաղաք-կենտրոնի տնտեսական ներուժն ապահովող շտեմարանի, դառնում «համբարանոց ուտելիքի համար»*[31]*:*

Արտաշես Ա-ը երկրի հաղորդակցության փոխադրումների և առաքումների ցամաքային ուղիների ընդարձակումն ամբողջացրեց՝ սահմանելով «ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք» և «ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք»[32]*: Այսպիսով՝* քաղաք-խորա-ճանապարհ *կայացած համալիրը խթանում է մասնագիտացված (հացագործական, խաղողագինեգործական, ձիթագործական, ձիաբուծական և այլն) տնտեսությունների զարգացումը, նպաստում միջշրջանային տնտեսական առնչությունների աշխուժացմանը: Արտաշեսյան արմատական բարեփոխումների ծավալուն գործընթացի արգասիքը՝ քաղաք-խորա-ճանապարհ համալիրի լայն տարածմամբ, միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիների ճյուղավորված ցանցի կայացումն էր, այն է՝* երկրի քաղաքայնացումը[33]*:*

«Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել» *(ընդգծումը – Գ. Ք.), երկրով մեկ հաստատել սահմանաքարեր*[34]*:*

Նոր հողեր ձեռք բերած, բազմամարդացված «մեր աշխարհում» ուռճացող նորելուկ ռազմավարչական ավագանին պետությանը մատուցած ծառայությունների դիմաց ստացած իր հողատիրույթները փորձում էր առավելագույնս ընդարձակել ի հաշիվ գյուղական համայնական հողերի: Զևավորված հողային հարաբերություններում համայնական հողատիրությանը սպառնացող վտանգը կանխելու նպատակով արքան՝ հողի գերագույն սեփականատերը, որոշակիորեն զատում է գյուղերի = համայնական հողերի և ագարակների = մասնատիրական տիրույթների սահմանները[35] *(արամեատառ) պարգևագրի հստակ բանաձևով՝ «Արտաշես արքան … բաժանեց հողը … միջև …»*[36]*:*

Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 136, 158): Երվանդի քաղաքը, Արտագերս բերդաքաղաքը և սրանց «յուտեստ» տրված գավառների մասին տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Մովսես Խորենացի), աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարությունեան, Տփղիս, 1913, II,Ղ, Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց (*այսուհետև՝ Բուզանդ*), *բնագիրը Ք. Պատկանյանի, Երևան, 1987, IV, ԺԹ: Գ. Սարգսյանը նշում է, որ «երևույթը հին է և ծագում է հելլենիստական շրջանից» (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 660-661):*

[31] *Տե՛ս Բուզանդ, IV, ԺԹ:*

[32] *Մովսես Խորենացի, II, ԾԹ:*

[33] *«… քաղաքների համակարգը և ճանապարհների ցանցը՝ կապված միջազգային ճանապարհներին». տե՛ս Ս. Զարյան. Ակնարկներ հին և միջնադարյան քաղաքաշինության պատմության, Երևան, 1986, էջ 26-27 և այլն:*

[34] *Մովսես Խորենացի, II, ԾԶ:*

[35] *Խնդրի լուսաբանումը տե՛ս Գ. Սարգսյան. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 194-197:*

[36] *«Արտաշիսյան սահմանաքարեր» գտնվել են՝ Գեղարքունիքում (Սևանի ավազանի հարավարևմտյան հատվածում՝ 10), Սյունիքում (Իշխանասարի ստորոտում՝ 1). Վարաժնունիքում (Թեղուտ գյուղից հյուսիս՝ 2), Վերին Տաշիրում (Սպիտակում՝ 1). սրանց մասին և համապատասխան գրականություն տե՛ս Գ. Տիրացյան. Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն.– ՊԲՀ, 1977, -4, էջ 254-259, Ռ. Բիշոնե, Հ. Հակոբյան և ուրիշներ. Արտաշես արքայի նորահայտ սահմանաքարը Սարուխանից.- Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր (Գ. Ա. Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ). Երևան, 2001, էջ 79-82, Ս.*

Արտաշես Ա-ը իր ագրարային հետևողական քաղաքականությամբ՝

– պահպանում է համայնքի՝ հարկատու միավորի, ամբողջականությունը,

– նորոգում է պետական հարկային համակարգը,

– ապահովում է հետևակ զորքի հիմնական մասը,

– օրինականացնում է նորընծա ռազմավարչական ազնվականության սեփականատիրական իրավունքները,

– զսպում է մասնատիրական տիրույթների արագ ընդարձակման միտումը,

– ստեղծում է կենտրոնական իշխանության համար հուսալի ամուր հենարան:

Արտաշես Ա-ի տնտեսական քաղաքականության անկյունաքարը հանդիսացող հողային բարենորոգումն ընդգրկեց հասարակության հայտնի բոլոր շերտերը, կազմակերպեց հողից առավելագույն եկամուտ ապահովող տնտեսություն և որպես արդյունք՝ «ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, յաղագս շինութեան երկրիս»[37]:

Արտաշես Ա-ի տնտեսական ճշգրիտ կազմակերպված, կայացած համակարգն էլ ավելի ամրապնդվեց Տիգրան Մեծի վարած հետևողական քաղաքականությամբ: Հայաստան գաղթեցված բնակչության զանգվածային վերաբնակեցումներով[38] յուրացվեցին նաև գյուղատնտեսական հսկայածավալ տարածքներ, ավելացվեց հարկատու ու զինապարտ բնակչության թվաքանակը, ստեղծվեցին բուն թագավորության պետական եկամուտների սրընթաց աճի, տնտեսական ու ռազմական զորեղացման անհրաժեշտ նախադրյալներ[39], որով ապահովվեց տարածաշրջանում Մեծ Հայքի միջազգային դերի տնական կարևորությունը[40]:

Հ մ ա յ ա կ յ ա ն. Արտաշեսյան սահմանաքարերի շուրջ.– Հայաստանի հնագույն մշակույթը 2. Երևան, 2002, էջ 72-75, Ն. Հ ա զ ե յ ա ն, Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Երկու նոր Արտաշեսյան սահմանաքար Վարդենիկից.– Հայաստանի հնագույն մշակույթը 2, էջ 76-77: Շիրակում (Բենիամինում՝ 2, Շիրակավանում՝ 2) հայտնաբերված առանց գրի կոթողների մասին տե՛ս Ф. Т е р - М а р т и р о с о в. Памятник классической античности Армении.– *«Բանբեր Երևանի համալսարանի», 1993, -3, էջ 66:*

[37] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, II, ԾԶ:*

[38] *Հայաստան են գաղթեցվել՝ Կապադովկիայի, Փոքր Ասիայի հելլենիստական քաղաքների բնակչությունը, ինչպես նաև կորդվացիներ, ադիաբենցիներ, ասորիներ և այլն. տե՛ս Ա պ պ ի ա ն ո ս. Հռոմեական պատմություն XII, Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ.–Հայ ժողովրդի քրեստոմատիա, Միհրդատական, 67,* С т р а б о н, XI, XIV, 15; П л у т а р х. Лукулл, XXVI.

[39] *Հիմնավորումը մանրամասն տե՛ս Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 92, 93 և այլն:*

[40] *Հայաստանի բազմադարյան պատմության տնական հզորության այս ժամանակաշրջանի հնագիտական ուսումնասիրության ներկա մակարդակն առավել խոր մասնագիտական վերլուծության հնարավորություն չի ընձեռում:*

СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО АРМЕНИИ В III–I ВВ. ДО Н. Э.

ГАЯНЭ КОЧАРЯН

Р е з ю м е

Историко-археологическим исследованием выявлена очевидность тенденции значительного роста объема и торгового оборота продукции традиционных отраслей земледелия и скотоводства в Армении в III–I вв. до н. э. Бурное развитие сельского хозяйства страны связано с экономической политикой Арташеса I. Результатом его радикальных экономических реформ явилось разветвление сети международных транзитных торговых магистралей, распространение системы город–хора–дорога, то есть урбанизация всей страны. Четко организованная экономическая система Арташеса I еще больше укрепилась при Тигране Великом – создавались предпосылки экономического и военного могущества Великой Армении для длительного выполнения ее значительной роли на международной арене.

THE AGRICULTURE OF ARMENIA IN THE 3rd – 1st CENTURIES B. C.

GAYANE KOCHARYAN

S u m m a r y

According to the materials of historical and archaeological research became obvious the trends in significant growth and trade of products of traditional industries of agriculture and animal husbandry of Armenia in the 3rd–1st centuries B. C. The rapid development of agriculture in the country was due to Artashes the First's economic policy. The result of his radical economic reforms was the forming of extensive network of international transit trade routes, spreading of the system city–khora–road, i.e. urbanization throughout the country. Well-organized economic system by Artashes the First was further strengthened by Tigran the Great – preconditions for economic and military power of Greater Armenia for long-term performance of its significant role in the international arena were created.